

ԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԱՆԻ՝ ԱՂՔԱՏԱՑ

Տէր իմ, ահա ես այլևոր ու աղքատ,
Ու մերկ սիրոյ եւ տենչանքի պարզեւէն,
Կու դամ երկար տառապանքի ճամբայէն.
Բայց Հայրութեանդ խոստումներուն դուռն առատ:

Գոց պալատներ, գլխաւոր դաշտեր առապար.
Չունեցայ ես թռչուններու հէգ բաժինն.
Ոչ ոք տրուաւ ծըէն մը սէր ժպտալին,
Եւ ոտքերուս տակ շարեցին սուր կայծքար:

Ափերուս մէջ արտասուեցի գիշերներ,
Որ իմ յոյսերս կանաչնային գէթ առտու.
Բայց ամէնուր հանդիպեցայ փուշերու:

Ե՞րբ պիտի գայ ժամն երկինք դիւ կանչելու...
Համառօտէ, Տէր, աղքատին ճամբաներ
Եւ դուն լըւա՛ անոր ոտքի փոշիներ:

ԵՐԱՆԻ՝ ՍԳԱԽՈՐԱՑ

Սուգն աչքերուս սեւ վարագոյր մը քաշած,
Ճակատս հողին՝ պարտէզին մէջ Ձիթենեաց,
Մարդն ինծի ալ լեղի բաժակ երկարեց,
Հազար անգամ խաչ հանելով կողահերձ:

Դուն իմ մանուկ աչքերս ըրիր երկնի պէս,
Հոն գերբնական արշալոյսներ բանալու.
Մըշուշ ելաւ, ամպեր զարկին ամպերու՝
Մաքուր կապոյտն անթափանց մութ փոխելու:

Թափառեցայ ճգնարանէ ճգնարան,
Անունդ հագած իբրեւ զըրահ փրկութեան.
Բայց ամէնուր սիրտըս գլխայ մըխացող

Տենչի մը տակ՝ երեւոյթով լուսաշող:
Ես ո՞ւր գտնեմ քեզմէ հեռու բախտի մեծ,
Ո՞ւր են, ո՞վ Տէր, քու պատրաստած օթեւանք:

ԵՐԱՆԻ՝ ՀԵԶՈՑ

Հեղ սրտերու ժառանգութիւնն ես դու, Տէր,
Ըստեղծելով արքայութիւն մ'հոն փոքրիկ.
Եւ քաղցրութեանդ բուրումնաւէտ ակնարկներ
Ձայն կ'ափօսեն սերմանելու վարդենիք:

Աչքերն ըրիր պատուհաններ հեղութեան,
Ուսկից բարի լոյսն ամէն օր կը ծորի.
Ո՞ւր կը շինեն այնքան անդին մեղրաման,
Քան սրտերն հեղ քու ճաշակիդ արժանի:

Շանթ եւ մրրիկ հեղ սրտին մէջ կը հանգչին,
Եւ ովկեաններ ափունքն իրենց կը դռնեն.
Սուրբ աւազան, շուրջը շնորհ ծիր կաթին՝

Ուր հրեշտակներ մըկըրտութիւն կ'երազեն:
Ո՞վ հեղ սրտեր, աչքե՛ր նըման աղօթքի,
Ժառանգեցիք երկիրս առանց պայքարի:

ԵՐԱՆԻ՝ ԱՐԴԱՐՈՑ

Քու պատկերիդ հողիս լըճակ մ'է մաքուր,
Ուր կը ցոլատ տիեզերքին հետ, ո՞վ Տէր.
Ոչ մէկ փոշի, եւ ոչ մեղքի սեւ փրփուր
Փոթորկեց զայն, քաշեց վըրան սեւ ամպեր:

Եւ միշտ անյադ արդարութեան աղբիւրն,
Կը սպասեմ որ սրտիս սափորը լեցուի.
Ես քաղցն ունիմ, պապակն ունիմ բոցաղին,
Աւետարանդ սեղան շտկէ իմ տենչին:

Գիտեմ, ամէն օր կը նայիս արդարին,
Եւ հաճոյքներդ հոն առաւօտ կը բերեն.
Քու բարկութեանդ թռչող շանթերն հըրածին

Անոնց վըճիտ աչքերն են որ կը սանձեն:
Արդարներուն համար, ո՞վ Տէր, անձրեւ տուր
Որ կանաչնան ժայռոտ սրտերն անհամբոյր:

ԵՐԱՆԻ՝ ՈՂՈՐՄԱԾԱՅ...

Ես հըրաւէր ճամբաներու եղերքին,
Անցորդներուն ջուրն աչքերուս մատուցի.
Աղքատ եմ ես, հարստութիւնս է սրտի՝
Ձեռքեր լըւալ, խոնջ ոտքերուն ալ փռլին:

Բացի ափերս եկուորներուն սուրբ սեղան,
Սէրը գինի, հոգիս նշխար սովեալին.
Հաց չեն մուրար մարդիկ, այլ խօսք մ'երկնային,
Եօթը սուրով բացուած վէրքի բալասան:

Որոմ չունին այնքան արտեր ցորենի,
Որքան փուշեր անդաստանն'ը սիրոյ.
Բոլոր աշխարհս հիւանդանոց մ'է սրտի,

Ու կը բախեն դռներս առտու երեկոյ:
Բաժնեցի ես իմ արեւնե'րըս բոլոր,
Տէր, դուն եղիր իմ ալ բաժինս արփաւոր:

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՍՈՒՐԲ ԵՆ ՍՐՏԻՒՔ...

Հոգիս լոյսով հաղար անդամ լըւացի,
Բայց նա երբեք չեղաւ ձիւնի պէս ճերմակ.
Շընորհքներովդ ինձ պատմուճան կարեցի,
Աշխարհն եկաւ, ցանեց փռլի սեւորակ:

Ծունըր դըրի ժամերուն մէջ սրբութեան,
Որ քու պատկերդ աչքերուս դէմ արեւայ.
Դու սուրբ ես, Տէր, առուններու բիրին վրայ.
Դու սուրբ ես, Տէր, կապոյտին մէջ հեռակայ:

Սակայն ի՞նչպէս երանի տամ իմ անձիս,
Երբ քու պատկերդ բուռն ալիքներ կ'եղծանեն.
Ո՞ր շուշանի ցօղով մաքրեմ իմ հոգիս,

Որ դուն ցոլաս Աստուածութեա'մբըդ նորէն:
Ո՞հ, մանկացած այն սրտերուն երանի,
Որոնց վըրայ հայեացքդ անոյշ կը հանդէլ:

ԵՐԱՆԻ՝ ԽԱՂԱՂԱՐԱՐԱՅ

Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն, եղբայրներ,
Կը պաղատիմ բազուկներով խաչանիշ.
Ինչո՞ւ մախանք, եւ մեր վըրան թուխ յօնքեր,
Ինչո՞ւ պայքար եւ արիւնի դոռ ղակիշ:

Ո՞հ, թողուցէք քիչ մը ժպտինք արեւուն,
Համբոյր ժողվենք պատուհանէ պատուհան.
Եւ հաւասար բաժնենք արեւն առաւրտան:

Աշխարհս արդէն հին հովիտ մ'է արցունքի.
Եւ սեւ նոճին միշտ պիտի լայ շերիմներ.
Մի՛ մըխէք սուր սրտերուն մէջ վշտալի.

Խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն եղբայրներ:
Պատրաստ եմ միշտ խաչ ելլելու ձեզ համար,
Ես ողջակէզ՝ եւ դուք սիրոյ մէջ եղբայր:

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՀԱԼԱԾԵԱԼ ԻՑԵՆ...

Հալածական եւ տանջուած իմ սրտէն,
Հիւանդ եմ ես, գըթա՛ Տէր.
Քու անունիդ եւ խոստումիդ ապաւէն
Հաւատքն ունիմ լոկ ընկեր:

Կիրքը սրտիս մէջն եօթնեակ սուր պողպատէ,
Մեղքերն ուսիս մագեղէն.
Ո՞հ, չեմ կրնար խոյս տալ երբեք ես ինձմէ
Եւ շուքերուս առջեւէն:

Աւետարան մը խնդրեցի բարձի տեղ
Եւ փուշ դըրին գլխուս տակ.
Սիրեցի ես անունդ կրկնել ամէն տեղ,
Քարկոծ եղայ շարունակ:

Գըթա՛, Յիսուս, տե՛ս իմ ցեղիս յորդ արիւնն
Որ սրտէս դուրս կը հոսի.
Այժմէն սուր մեղ արքայութեան քաղցրութիւնն,
Եղբայրներուս եւ ինձի:

